ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 0645-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, , Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 17,18 գ և 13-րդ կետերի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> հ. 600-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետով 2015 թվականի մարտի 19-ի հ.596-Ն որոշման N-1 հավելվածի 49-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, և ինքնակամ կառույցն իրականացրած անձի՝ Գագիկ Սպարտակի Մովսեսյանի 01.02.2024 թվականի թիվ 0678 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Սեփականության իրավունքով Գագիկ Սպարտակի Մովսեսյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփ. վկայական 11122018-04-0030/ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղում գտնվող 04-047-0030-0019 կադաստրային ծածկագրով 1386.0 քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված պարիսպները՝ 11.9 քմ մակերեսով ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ իքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ընդհանուր արտաքին 11.9 քմ մակերեսով ինքնակամ բնակելի կառուցապատման նշանակության օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ 524,4 << դրամ ընդհանուր՝ 6240(վեց հազար երկու հարյուր քառասուն) << դրամ:

4. Գագիկ Սպարտակի Մովսեսյանին պատկանող Հայաստանի Լուկաշին գյուղում գտնվող 04-047-0030-0019 կադաստրային ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Լուկաշին գյուղ, Հ.Ավետիսյան փողոց 68:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր Լուկաշին գյուղ Հ.Ավետիսյան փողոց 68 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման)տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023XTW9GD:

6. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թ. մայիս 14
ք. Արմավիր